

## **ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե**

### **Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 34/2**

**18 նոյեմբերի 2016թ.**

Քննարկվեց Դավիթ Ռիստակյանի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Աշտարակի ՏՀՏ կողմից լրացուցիչ հաշվարկված պարտավորությունների դեմ:

#### **Դավիթ Ռիստակյանի գանգատում բերված փաստարկները.**

Ի պատասխան Աշտարակի ՏՀՏ-ից ստացված ծանուցման Դավիթ Ռիստակյանը (այսուհետ նաև՝ գանգատաբեր) հայտնում է, որ իր կողմից իրականացվել է շարժական գույքի օտարման հետևյալ գործարքները.

1. 16.06.2016թ. վաճառել է VAZ 21214 մակնիշի ավտոմեքենա, որն իրեն սեփականության իրավունքով պատկանել է 08.02.2016թ-ից:

2. 08.02.2016թ-ին վաճառել է VAZ 21074 մակնիշի ավտոմեքենան, որն իրեն սեփականության իրավունքով պատկանել է 24.09.2014թ-ից:

Գանգատաբերը հայտնում է, որ հանդիսանում է ֆիզիկական անձ և վերոգրյալ գույքը վաճառել է ֆիզիկական անձանց:

Ելնելով վերոգրյալից՝ գանգատաբերը գտնում է, որ իրականացված գործարքներից ԱԱՀ-ի գծով պարտավորություններ չեն կարող առաջանալ:

#### **ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ Դավիթ Ռիստակյանի (վաճառող) և Աշոտ Զումայանի (գնորդ) միջև 08.02.2016թ-ին կնքվել է «Տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագիր», որի համաձայն Դավիթ Ռիստակյանը Աշոտ Զումայանին է վաճառել «VAZ 21074» մակնիշի (թողարկման տարեթիվը 2012թ.) ավտոմեքենա: Նշված պայմանագրի 1.2 կետի համաձայն վաճառվող «VAZ 21074» մակնիշի ավտոմեքենան Դավիթ Ռիստակյանին սեփականության իրավունքով պատկանել է (ձեռք է բերվել) 24.09.2014թ-ից:

Այնուհետև, Դավիթ Ռիստակյանի (վաճառող) և Աշոտ Բայանի (գնորդ) միջև 16.06.2016թ-ին կնքվել է «Տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագիր», որի համաձայն Դավիթ Ռիստակյանն Աշոտ Բայանին է վաճառել «VAZ 21214» մակնիշի (թողարկման տարեթիվը 2008թ.) ավտոմեքենա: Նշված պայմանագրի 1.2 կետի համաձայն «VAZ 21214» մակնիշի ավտոմեքենան Դավիթ Ռիստակյանին սեփականության իրավունքով պատկանել է (ձեռք է բերվել) 08.02.2016թ-ից:

Հանձնաժողովը գտնում է, որ քաղաքացի Դավիթ Ռիստակյանի կողմից 16.06.2016թ-ի «Տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագրով» իրականացված «VAZ 21214» մակնիշի ավտոմեքենայի վաճառքը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն համարվում է ապրանքի մատակարարում, հետևյալ հիմնավորմամբ.

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն. «Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված գործարքները համարվում են ապրանքի մատակարարում հետևյալ դեպքերում՝

...

բ. մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու և ավելի թվով անգամ անձի սեփականությունը կամ ընդհանուր սեփականությունը հանդիսացող նույն տեսակի հետևյալ գույքի՝ բնակարանի, առանձնատան (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), անձնական օգտագործման ավտոմեքենայի, գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողերի, ավտոտնակի՝ որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց օտարման դեպքերում ապրանքի մատակարարում է համարվում այդ ժամանակահատվածում երկրորդ և ավելի թվով նույն տեսակի գույքի օտարումը, եթե օտարումը կատարվում է տվյալ գույքի ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում»:

Քննարկվող դեպքում Դավիթ Ռիստակյանի կողմից իրականացվել է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետով նախատեսված ապրանքի մատակարարման գործարք, այն է՝ մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու և ավելի թվով անգամ կատարվել է նրա սեփականությունը հանդիսացող ավտոմեքենաների օտարում, որոնցից երկրորդն օտարվել է դրա ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները Աշտարակի ՏՀՏ կողմից հաշվարկվել է «VAZ 21214» մակնիշի ավտոմեքենայի վաճառքի գործարքից առաջացած ԱԱՀ-ի պարտավորությունը՝ ընդամենը 87.017 դրամ, այդ թվում՝ հարկ 66.680 դրամ, տույժ 7001 դրամ, տուգանք 13.336 դրամ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

## ո Ր Ո Ղ Ո Մ Է՝

Դավիթ Ռիստակյանի գանգատը մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ